

փշտակել, և անանկ սիրուն և անվերջանալի կեանքի մի հասնիլ ուզող հարկաւ այնպիսի ուղիղ ճանապարհ մի պիտի բռնէ, որ զինք ուղղակի հոն հասցընէ. հին ուր Աստուած պատրաստած է իւր սիրելեաց համար. հին, ուր կեանքն անփորձ և անվիշա է. հին, այն տեղ, գէպ այն բարձրութեան, ուր նկատել տուաւ միշտ Քրիստոս, և ուր հասնելու ցանկացած ու մահու չափ ախատած են ամեն վեհ հոգիներ, սուրբ սրտեր և վեժմ մտքեր. վերջնապէս անանկ անկասկած շաւիղ մի պիտի բռնէ, որ կարող լինի առաջնորդել և տանել գէպ այն անկարօտ վայրը՝ զոր մարմնոց քողին տակ ծածկուած մարդկային միտքը չէ կարող լիովին երեւակայել. քանզի անոր ոչ համեմատութեան չափ մի և ոչ նմանութեան գաղափար մի ունի. չէ կարող պատմել լեզուն, քանզի նորա անպատում հոնգամանքները բացատրելու համար մարդկային լեզուն խիստ աղքատ է. չէ կարող աննել նաև այս զգալի աչքերը. քանզի նորա կատարելութիւնը նկատելու չափ սրատեսութիւն և կորով չունի. մարմնոց լսելիքն եւս չէ կարող լսել նորա կատարեալ նկարագրութիւնը. քանզի տկար է, այլ միայն սուրբ եւ առաքինի հոգին իւր ներսի գին կրգոց կը վայելէ եւ նորա յիշատակաւ կ'ըզմայի ու կը բերկրի:

(Շարունակելէ):



Ոգի փառասիրութեան և, մկտումն գահերէցութեան իբրև, առաջին տիրապետ շուսաւորեաց դարուս այսմիկ:

Այն երկնային կրօնն որանելիս սր զօրութեամբ ճշմարտութեան իւրոյ լծափ անցեալ 'ի սիրաս եւ 'ի հոգիս մարդկան զկարծրացեալ սիրաս նոցա կակըացուցեալ փոսկահաս աղբիւրս

բլխեցուցանելոց էր ճշմարտութեան, և և վստացեալ բարս նոցա ամօքե ալ հլուս և հպատակս առնելոց էր զնոսա աւետարանական Աստուածապարգև վեժմ պատուիրանաց, և և որ խղեալ, խորտակեալ զամբակուռ շղթայս կրկց և մոլութեան, և սրբեալ, զարդարեալ զմարդն բաղմազան շքեղ նկարուք առաքինական գործոց՝ զոգ վինելոց էր խորհրդաւոր՝ հոգեւոր միութեան Աստուծոյ ընդ մարդկան, եւ կարապետ նմա առաջնորդութեան յանմահական տաճարն գերահրաշ, զադինականն ըզգեցուցեալ նմա զըւսափայլ հանդերձն անմեղութեան, զկրօնն ասեմ բլքքրիստոնէական, զգերազանցն բնաւ ից կրօնից մարդկայնոց, այժմ աստանն մքանկեալ 'ի նախկին պայծառութենէ իւրմէ, կորուսեալ զսուրբ և զվեժմ նըշանակութիւն իւր, և 'ի ձեռս դահասիրութեան եւ փառամոլութեան անօրէնք շրջեալ յեղեռնական դիմակ իմն չարագործութեան՝ արարին 'ի պատշաճ գործի անօրէնութեան:

Ընդ սովաւ իբրեւ ընդ խաւարս բորբ քողով ծրագրեալ նիւթին ամենատեսակ քստմնելի եղեռնագործութիւնք, որք յապագային իրականութիւնս ստացեալ՝ պատճառ լինին բաղմազեւտ վրդովմանց եւ սասանութեանց:

Ընդ սովաւ ծակամուտ եղեալ զօղին մարդագէժ ձիւաղք դբժոխայինք: Սորա լուսազգեստ հանգերձիւ պաճուճեալ՝ փողիտղեալ երեւին արտաբուստ լիացեալքն՝ 'ի ներքոյ խաւարային պիղծ խորհրդով և չարութեամբ:

Վերջնապէս յանուն սորա հակառակ իւրումն նպատակի ծածկապէս շանթիք անխրաւութեան տեղան 'ի վերոյ մարդկան: Սրդ՝ մաւիցուք յասրացուցութիւն վերոգրելոցդ ըստ մերում կարի:

Շուրջ լայնածաւալ զերկրագնդաւ

ւրս 'ի թեթեւ թռիչս մտաց սաւառ-  
 նաթեւ խոյացեալ՝ ուշ 'ի կուրծս նը-  
 կատեոյցք զայս մեծ աշխարհահան-  
 դէս , և ահա մի զինի միոյ ընդ առաջ  
 մեր ելանեն աղբք լուսաւորեալք եւ  
 բարգաւաճեալք արհեստիւ և գիտու-  
 թեամբ , որք քեալք լիացեալք ամե-  
 նայնիւ երջանիկք են , եւ որոց կայ-  
 սերք և թագաւորք հզօրք են և մեծ ,  
 և չունին զոր ընդգիմակայ իւրեանց ,  
 և 'ի յաջող բաղդս զինուց խրոխտա-  
 ցեալք օրէնս և սրատգամս արձակեն  
 Աղբաց և ազանց , շուրջ որոտան , շան-  
 թեն յօսկենկար գահայից իւրեանց , և  
 առհասարակ սլակուցանող ահիւ կա-  
 սեալ կոշկանդեն զհամայն երկրածինս :

Այլ ըստ սոցանէն 'ի տեսութիւն  
 մեր գան միանգամայն եւ աղբք փո-  
 քունք և աննշանք , որոց չէք թագա-  
 ւոր և կայսր , և որք ընդ այլով հզօրա-  
 գունիւ ճնշեալ բռնապետական իշխա-  
 նութեամբ , հալածեալք , հարուա-  
 ձեալք և չարչարեալք և 'ի գաղանային  
 անդթութենէ մարդկան անոյս ե-  
 ղեալք 'ի գտանելոյ նշոյս իսկ կարեկից  
 ողորմութեան զձեռս 'ի վեր յերկինս  
 ամբարձեալ զՍմենակալին հայցեն յին-  
 քեանս զհովանի աջոյն անցալթելի , և  
 յամենայն անկեանց տիեզերաց դառն  
 հեճեճանաց աղետորմ ձայնք նոցա  
 հարկանին 'ի լսելիս , որք հանապազ  
 արգարութիւն աղաղակեն . . . : Եղ-  
 կելի հակապատկեր : Քանզի փառա-  
 սիրութիւնն և ձկտումն գահերէց իշ-  
 խանութեան զառաջին գրաւեալ ըզ-  
 տեղի 'ի մարդկային հոգեկան կիրս՝ ա-  
 մենայն ազգք և ազնիք այժմեան ժա-  
 մանակիս միշտ եւ յարածամ ջան 'ի  
 գործ դնեն զմիմեամբք գերազանցել  
 փառաւորութեամբ և իշխանական մե-  
 ծութեամբ . սակա այսօրիկ միշտ նա-  
 խանձին 'ի փառս եւ 'ի մեծութիւնս  
 միմեանց , խոժոռահայեացք 'ի միմեանս

գուն գործեն նուաղեցուցանել զիշ-  
 խանական աղբեցութիւնս միմեանց , և  
 կամ եթէ հնար ինչ իցէ տապալել իսկ  
 զմիմեանս . և առ 'ի հասանել 'ի կարօ-  
 տագին յեղբ ըղձկց իւրեանց 'ի բազ-  
 մապատիկ եւ յանլուր ոճրագործու-  
 թիւնս զմիմեամբք ելանեն : Ի սակա  
 շնչին և փանայրի սրսածառանաց զա-  
 տամունս կրճտեն , առիւծարար 'ի վե-  
 րայ միմեանց ժանիս արկանեն եւ ա-  
 հեղապէս մունչեն ծարաւիք արեան  
 միմեանց : Փոքրագոյն կայծ իմն ան-  
 կեալ 'ի նոսա անհամաձայնութեան  
 հրդեհէ 'ի նոսա զանչջ ցատումն եւ  
 զատելութիւն անվախճան , եւ յայն-  
 ժամ ամպստուակ ոխակալութիւնն  
 հեղու 'ի վերայ նոցա հրակարկուտս  
 հրազնուց : Եւ ահա անդ է տեսա-  
 նել որոտագին գոռումն դոչումն մա-  
 հահրաւէր զինուց , 'ի միում վայրկե-  
 նի շանթահար անկանիլ բիւրաւոր ող-  
 ւոց և դիւթաւալ յերկիր խաղալ յա-  
 րիւն աղաժոյժ 'ի չարահնար մահաղի-  
 նուց և ննջել յաւիտեան զքուն մա-  
 հուն 'ի հողապատեան հանգստարան  
 'ի ծոց երկրի . կոծ և կսկիծ սիրելեաց ,  
 ողբ և ճիչ մարց . փետել խղել դեռա-  
 մուսին հարսանց զհերս գլխոց իւրեանց ,  
 բաղխել սաստկապէս զկուրծս , ջայլել  
 աղիտորմ զեղերական երգս առեալ  
 տրտմահաղորդ եւ զզջական , աւեր  
 և հրդեհ հոյսչեն քաղաքաց , առ և  
 կողպուտ ընչից եւ ստացուածոց ,  
 լաց և վայել կործանելոյն , դիւական  
 կայթիւն և մղեկան ցնծութիւն բարձ-  
 րացելոյն , եւ առհասարակ սուգ եւ  
 տրտմութիւն զգենուլ երկրին :

Այլ թո՛ղ զայս , որք հզօրքն գտանին  
 ըստ իւրեանց չարականութեն բազում  
 զանհեթեթ բեռ ինս 'ի վերայ անկելոյն  
 բառնան , օրէնս անիրաւութեան դը-  
 նեն 'ի վերայ նոցա , խուեն զնոսա եւ  
 կողպտեն յամենայն փոթմամբ թե՛ց

անիրոււ պահածմամբ իւրեանց, իրրև զողորակ անյագ զկենսատու զարիւն նոցա ըմպելով, զի մի լիցի նոցա հընար վերտօնն կանգնելոյ և զվերս իւրեանց պատելոյ, և այսպէս զնոսա յանդուհոս թշուառութեան գահավիժեալ և ոչ խի վայրկեան մի ժամանակի տան նոցա հանգիստ և անդորրութիւն, թէպէտ և ձայն բարձեալ սոցա գողեն, աղաղակեն և պաղատին, և զարգարութիւն ՚ի նոցանէ հայցեն, բայց աղիտըրմ ձայնք նոցա ոչ հարկանին ՚ի լսելն նոցա ՚ի խոր անդնդոց տառապանաց, այլ յանկիւնս թշուառութեանց՝ ուստի ելինն, շիջեալ անհետին իբրև զծուխ ծխանի յօգս ցրն գեալ, մինչեւ ապա եկեալ հասեալ մահահրաւեր հրեշտակն երկնաւայր, արբուցանէ նոցա զբաժակ մահուն խաղաղաւտ, և ընդ տառապանս նոցա վերջ տայ և բողբարիւս հառաչանաց նոցա :

Ո՛հ, այս իցէ գործ ճշմարիտ աշակերտին Քրիստոսի. այս իցէ արգիւնք վսեմ պատուիրանին սիրոյ, բրբրիտոսասեր զանձն դաւանել և չարչարել զհոգեւոր հօս նորս. յաչս այլոց կեղծաւորել բարեպաշտ և կատարող կրօնական պարտուց, և զհակառակն նորս գործել անհաւատագոյնքան զանհաւատսն ընթացեալ :

Ո՛վ սքանչելի երկայնմտութեան սլորմածիդ բարեբարութեան, ո՛վ անհաս զթուլթեան յաւիտենականիդ, սր բողբ բարձեալ զմարդկան չորս գործութենէ զարբութիւն անուանդ ինդրես Ատուածական բարբառով աղաղակելով, եթէ « Անուն իմ հայհոյի վասն ձեր ՚ի մէջ հեթանոսաց » և ոչ արդար սրտմառութեամբ շանթահար ստուակես զազգս մարդկան զամբարշտեալս ՚ի բեզ, որք ընդվիւսաբ յընաց բերեն զկենսատու պատուի-

րանս քո, եւ անթիւ չարեօք պղծեն զարբութիւն անուան քո. նա զի եւ զերկնային վսեմ և սքանչելի պատուիւրանն սիրոյ, զկենարարն և զմարարն մարդկան, զոր պատգամ շնորհեցեր մարդկութեան ՚ի յաւիտենական բարձրագահ աթոռոյդ աստուածեան, զարգանալ ՚ի նոյն և մերձեալ ՚ի բեզ, ՚ի լոյսդ անմերձ, և աթոռակից բեզ բաղմեալ յեզեմեան ՚ի դարաստան, ՚ի կայս շքեղ արգարոց, զերեքսրբեան երգս առեալ ընդ հրակերպեան գասս անմահից ընդել անդ առատարար զանմահ սիրոյդ զբաժակ, զայս պատուիրանն, եթէ « Սիրեցէք զմիմեանրս » կուրացեալ խղճիւ և մտք, փախեալ յմաստից զհակառակն բարոզեն միմեանց յահեղագոչ ձայն որտարնդատ թնդանօթից և մահագգեաց հրազինուց, եթէ « Ատեցէք զմիմեանրս » :

Ո՛հ, որպիսի հակապատկեր Ատուածային սիրոյ և մարդկային ասելութեան, մինն կենսատու եւ միւսն մահատու, ժինն յերկնուստ կայլակեալ ՚ի նշան միութեան Ատուածոյ ընդ մարդկան, և միւսն յերկրէ, ՚ի չարութենէ մարդկան հնարեալ, Առաջինն ՚ի լեառն Գողգոթայ ՚ի բառակողմեան մահահոտ գործի ՚ի բաղիտարամ բեւեռեալ Փրկչէն սուեալ առհասարակ ընդհանուր մարդկութեան, խի երկրորդն իշխանական պերճութեամբ յաւկենկար գահ արբունեան շքեղորէն բողմեալ յիշխանէ աշխարհիս սուեալ : Ա՛յս է ահա ճշդիտ պատուիւրաւասիրութեան, ցամաքեցուցանել զբարեպաշտական զգացմունս, նուազեցուցանել զտէրն բրբրատնէական, որով և պատճառ վինել բազմադիմի յեղափոխութեանց և կործանման բաղմայ յանդուհոս թշուառութեան, և առհասարակ զվերջնայն բերելով զօրի-

նակ դատատանին վեր ՚ի վայր յու-  
ղել զաշխարհս ՚ի հիմննց իբրեւ զծով  
մի ալեկոծ ՚ի փաթորկալց պատկա-  
շունչ հողմոց :

Արդ՝ դարձուցից զբանս իմ՝ Աղգն  
իմ սիրելի ՚ի սրտակերպուցանել աս-  
տանօր իբր ՚ի հայելւօջ զանթիւ եւ  
զանհամար շանթիս հարածանաց զորս  
կրեաց նա յամենայն իսկ կեանս իւր  
և կրէ մինչեւ ցայսօր ՚ի փառասիրու-  
թենէ աշխարհի , քանզի քաղցր է ինձ  
յոյժ և մեծադէս ցնծութիւնն՝ բանս  
ինչ յօգեալ առաջի ցուցանել աստա-  
նօր զքրիստոնէական ներող ոգին տա-  
ռապակիր , այլ համբերատար Աղգին  
իմոյ , զի սա միայն է որ քաջալերեալ  
յուսասիրդէ զմեզ և սովաւ հոսին յա-  
չաց որոնձաձեւ կայլակք մխիթարա-  
կան արտասուաց :

Իսկ արդ՝ եթէ աղգք մեծամեծք  
եւ հօր սրտութիւնք այսպիսի կրեն  
հանապաղ ՚ի միմեանց չարիս , ապա  
որչափ եւս առաւել նորա որք ան-  
կեալ կործանեալ յիշխանութենէ իւ-  
րեանց , և ոչ մի ինչ տեղի երկիւղի և  
կասկածանաց տան նոցա : Եւ սոցա  
թշուառութիւնն առաւել է քան զա-  
մենեցունայն , և բազմայս փոսնգաւոր  
իսկ գոյութեան ազգայնութեան իւ-  
րեանց . քանզի փառասիրութիւնն , իչ  
խանն աշխարհիս ոչ ՚ի վէգ գոյ բնդ  
նոսա և ՚ի սոցքար մարտիւ պատերազ  
մաւ , այլ քրիստոնէական սուրբ և սրաչ  
տելի կրօնիւ քողարկեալ ծածկապէս  
չարսհար մեքենայիք պեղեալ զհի-  
մունս ազգայնութեան նոցա կործանէ  
զնորա շինուածն նման աշխարհաւեր  
միջատաց Գերմիտ կոչեցերայ : Եւ զայս  
վասն բազմացուցանելոյ զաղգային ան-  
հատս իւր . զի սովաւ ամբասնդեալ  
զչորութիւն մարմնական կարացի տի-  
րել աշխարհի և ՚ի բախն ունել զըս-  
վանդակ տիեզերս : Եւ արդարեւ զար-

ձուցեալ զակնարկութիւն տչաց մերոց  
յեջս Աղգային սրտամական մասննից  
անցեալ ժամանակաց , տեսնելմք զԵ-  
կեղեցին՝ հիմն Աղգութեան մերոց յան-  
հարին տառապանս մասնեալ վասն  
արիտպէս սրաշտպանելոյ զսուրբիւ-  
կան անկախութիւն եւ զանարատու-  
թիւն իւր բնդդէմ սարկութեան : Ի  
Պարսկական մոլեռանդն մօզակրօնու-  
թենէ բազմութիւ արի և քաջ նահա-  
տակս թողեալ , և արեամբ նոցա իբր  
վայելուչ երանգօք ներկեալ : Յարաբա-  
կան արշաւանաց միլիոնաւոր հորա-  
զատ սրգիս տուեալ ՚ի զոհ և ՚ի ձեն-  
ձեր ՚ի լավիկողոյ բոցս և ՚ի բերան ան-  
յագ սրոյ՝ ՚ի հաստատութիւն եւ ՚ի  
սրայծառութիւն քրիստոնէական սուրբ  
կրօնին , Իսկ ՚ի Յունական անաթի-քը-  
րիստոնէական մակրօնութենէ և յա-  
տելութենէ բազմութիւ կարկուտս և  
շանթս հարածանաց բնիալեալ ՚ի գը-  
լուխ իւր՝ Քրիստոնէութեան նախկին  
և բազմաչարչար վիայուհին . այլ սա-  
կայն քրիստոնէական սիրով արիտպէս  
համբերեալ , հրոյ , սրոյ , կտպանաց ,  
տանջանաց , բանտից , գերութեանց  
և աղբի աղբի լիանաց և կտտանաց ,  
եւ արիւնաթաթաւ վիրօք աննկուն  
եւ հաստատուն մնաց ՚ի կոչման իւ-  
րում : Այլ աւանդ , զի դեռ եւս այն ինչ  
կորուսեալ զընագաւառն իւր զչայաս-  
տան , բարձեալ զփրկչական խաչն յուս  
իւր և յեկեղեցին ապաստան ցրուեալ  
է ՚ի հեռաւոր օտարութիւնս ՚ի բըռ-  
նութենէ անկրօն աղանց , զի դէթ  
խաղաղ կեցցէ առ կրօնակից եղբարս  
իւր , և ոչ իսկ արդ անգորրացեալ է  
առ նոսա , այլ շարունակ հալածեալ  
և հարուածեալ ՚ի նայն իսկ ՚ի նոցանէ  
եղբայրագաւ նենգութեամբ և բա-  
զում աղգային հատուածս տուեալ է ՚ի  
զանազան ազգս : Քանզի վտտիկանեան  
քաղաքականութիւնն զըարբանջանս

անխաղախանութեան հիմ եզեալ բարոզութեան իւրոյ, առանց իսկ ակնածելոյ ՚ի կոչմանէն քրիստոնէութեան, առանց իսկ պատիտելոյ ՚ի շարչարակիր կերպարանաց մերս Եկեղեցոյ, զբազումս յորդուցն հատուածեալ ՚ի մայրենի գրկաց նորա խորդացոյց ՚ի նմանէ, եւ ստոանայական որոմնուցանութեամբ խռովութիւնս եւ երկ պատակութիւնս յարոյց յորդիս Եկեղեցոյ հիմնեալ յանմիտ սկզբունս իւր եթէ « Նպատակն արդար սցուցանէ զմիջոցն ո, մինչ զի եւ շատք եւ հատուածեալք ՚ի նորա կողմն օտարանան հետ զհետէ ՚ի Հայաստանեայց Եկեղեցոյ, Եւ այս « Վասն ամենամեծ փառաց Աստուծոյ ո ըստ նորա բարբանջանաց, Ընդ նոցն շուիլ գնայ եւ կրօնն Լուտեբական :

Իսկ հօր կառավարութիւնք, որոց ընդհովանեալ իշխանութեան կեան բազումք Աղգայնոց մերոց, այլ իմն դիւական մեքենայութիւնս ՚ի գործածեն՝ առ ՚ի հասանիլ ՚ի նպատակ ըլ ձից իւրեանց, Քանզի քաղաքականութիւն այժմեան դարու հօր ազգաց կայանայ միմիայն ՚ի ձուլել ՚ի մի ընդ ազգակիցս իւր զայլ եւ այլ հպատակ ազգս տերութեան իւրոյ, զի կարող լիցին գեր ՚ի վերոյ ամբառնալ քան զամենեւին զօրութեամբ եւ մեծութեամբ : Վասն որոց ջան ՚ի գործ զընեն մուծանել Աղգս մեր ընդ բռնապետական իշխանութեան եւ զազգային սովորութիւնս եւ զձէսս իւրեանց, զի դարաւոր սովորութիւնք եւ ձէսք Աղգութեան իսպառ բարձեալք փոքր առ փոքր շնչի սէր Աղգայնութեան : Հրամայեն ուսուցանել ՚ի վարժարանս Հոյոց զաղգային սրամուտութիւն իւրեանց նախքան զուսուսն հայկականին, որպէս զի ՚ի մանկութենէ կարող լիցին բառնալ ՚ի սրտէ Հոյմանկուցն զը

դի ազգութեան : Նաեւ բայց յայս մանէ զաւագս Հոյոց ամբառնան յիշխանական պատիւս եւ ՚ի փառս, զի նոքօք գողանայցեն ՚ի նոցանէ զսիրտս ազգասէր :

Ահա այս է վիճակն մեր ներկայ, եւ այս են արարք քրիստոնեայ ազանց որ շուրջ զմեզն բնակին, Յամենայն կողմանց որդայթք եւ ճիզվիթական մեքենայութիւնք, յամենայն կողմանց յարձակմունք յԵկեղեցիս մեր ընդդէմ եւ հակառակ աւետարանական զեմ պատուիրանաց, պատրողական ակնաւ պարար շացմունք պատուոյ եւ մեծութեան ՚ի կորուսանել ձե յանհետացուցանել յինքեանս զպայութիւն Աղգութեան մերոյ :

Այլ ոչ, սլ բռնաւոր տիրապետք աշխարհիս, ոչ կարէք հասանել յըլձայի նպատակն ձեր որչափ եւ Արքիմեդական ճարտար մեքենայս հնարիցէք, քանզի Առաքելական Եկեղեցին Հոյաստանեայց հաստատեալ է ՚ի վերայ անշարժ հիման հաւատոյ, զի նա բազմութիւ մարտիրոսաց արեամբ ներկեալ է, եւ զի փոքր առ փոքր զարթիցէ եւ Աղգն մեր ՚ի խոր թըմբրութենէ իւրմէ, զարթիցէ եւ ՚ի խորս թափանցեալ ամենայն դազանի ձկրտմանց ձերոց, տեսեալ եւ զսոսկահարուէր վիճակ իւր, խորշեալ եւ զըուեալ փախիցէ ՚ի ձէնջ իբր ՚ի մահահատ իժէ, եւ որպէս մինչեւ ցայսօր անսասան սոկաց ամենայն դառն հարուածոց ձերոց, սոկացէ եւ մնացէ հաստատուն եւ կանգուն ՚ի յամայր ամս, քանզի նման է նա տիտանեան հսկայածեւ ժայռի մից կանգնեալ ՚ի մէջ Ավիլանու : Յարկոցն յամենայն կողմանց հողմք եւ մրրիկք, յարկոցն եւ ուժգին փոթորիկք, խուժեցոցն ՚ի նա կոհակք վէտ ՚ի վէտ, յորդան տացն ՚ի վերայ նորա արեւ ամս հիք, բազմեալ

ցեն զնս ուժգին , և ահա՛ անդէն յե-  
տըս ընդդէմ՝ դարձցին մեծաւով  
ժայթքեալ փրփուրս սպիտակափայլս ,  
և ոչ մի ինչ կարացեն առնել նմա , և  
նա կացցէ հաստատուն և անասան :

Ի վերայ այսր ամենայնի մէք եւս  
սիրելի ազգայինք իմ , մէք եւս պար-  
տիմք հանապազ արթուն և զգոյշ կալ  
զի մի անկանիցիմք յորոպայթս թշնամ  
ւոյն . քանզի սոսիք մեր իբրեւ դա-  
ռիւծս մենչեալ գոչեն թէ երբ կա-  
նիցեն զմեզ : Մէք պարտիմք իբրեւ  
հարազատ սրգիք Հայաստանեսաց Ե-  
կեղեցւոյ իբրեւ առաջին և նուիրա-  
կան պարտք քաջ իմանալ զվարդապե-  
տութիւն նորա , և յամենայն ժամա-  
նակի , յամենայն իսկ պատահմունս  
պատրաստ գտանել ՚ի պաշտպանու-  
թիւն նորին : Պարտ ՚ի վերայ ձեր կայ ,  
սիրելի արենակիցք իմ , հանապազ  
զորդիս ձեր առաքել ՚ի հայկական վար-  
ժարանս , զի ուսցին նորա անդ զճրչ-  
մարիտ ուսումն քրիստոնէական , եւ  
յապագայ ժամանակս ասոյեանք հան-  
դիսացին պաշտպանողք Ազգութեան  
ընդդէմ՝ բազմախուռն յարձակմանց  
մոլեռանդութեանց վարեւոյց ՚ի փառա-  
սիրութենէ , որով Ազգութիւնն կարէ  
անասան և հաստատուն կալ : Պար-  
տիք կարձել զորդիս ձեր յերթեւեկու-  
թենէ ՚ի վարժարանս օտարաց նախ  
քան զուսումն հայկականին , զի կո-  
րուսանեն նորա անդ զոգի և զարիւն  
Ազգայնութեան . եւ միտք նոցա ա-  
ռանց գիտութեան շողեալ տողորին  
օտարին խմբօք , և սրք ՚ի մէջ ազգին  
գայթակղեցուցիչ անհատք լինին եւ  
պատճառք խախտելոյ հիման Ազգայ-  
ին շինուածոյն . քանզի և կաթուած  
մի մեղծի ծորեալ ՚ի գաւաթ մի կարէ  
պըտորել զյստակութիւն ջրոյ նորա :  
Վերջապէս օրինակ լեալ մեզ անհոգու-  
թիւն ջրընթակ ազգացն Հայաստանի ,

որք չարաչար հարեալք ՚ի թշնամւոյն  
գահաւէժ տապալեցան յանդուհոս  
կործանման , ջան ՚ի գործ արկեալ գուն  
գործեցուք լուսաւորել զմիտս Հայ-  
մանկուոյն , նախանձանդիք լիցուք  
փառաց եւ պայծառութեան Եկեղե-  
ցւոյ , եւ քաջ ՚ի միտ առցուք , զի  
յաղթանակ մեր ընդդէմ տիրապետու-  
թեան և փառասիրութեան աշխար-  
հիս մե՛ծ և վսեմ եղցի :

Աւետիս Կարապետեան  
Պօլսէջի  
Ալա . Ժառ . Վար .

Է . ՏԻԵՋԵՐՍԿԱՆ ԺՈՂՈՎ

Տերոյնոց պատուելին Հայրենիքի մէջ  
հրատարակած Ս . Գատառակի պատ-  
մութեան վերջին մասին մէջ է . Տիեզե-  
րական ժողով մը կը յիշէ : Չը հասկա-  
ցանք թէ Պատուելին իբրեւ Հայ , թէ  
իբրեւ օտար մը գրած է այն սողերը . վա-  
սըն զի չեմք կարծեր , որ իբրեւ Հայ այդ-  
չափ տգէտ լինի մեր Հայաստանեսաց Ա-  
ռաքելական Եկեղեցւոյ պատմութե .  
մեր Եկեղեցին բաց ՚ի երեք տիեզերա-  
կան ժողովներէ , այն է Նիկիոյ , Եփե-  
սոսի և Կ . Պօլսոյ Ս . Ժողովներէն ու-  
րիշ Տիեզերական ժողով մը չը ճանա-  
չէր . և ոչ թէ ըստ պատուելոյն է . տի-  
եզերական ժողով մը , այլ շարք մը իսկ  
չընդունելու համար այնչափ զոհեր  
տուած է Յունական եւ Լատինական  
մոլեռանդն հետամտութեանց և մինչ  
չեւ ցարդ կը տայ :

Պատշաճ կը համարիմք այս մասին  
Ներսէս շինողն օրով Յունաց Կոստան  
զին կայսեր սպառնալից հրովարտա-  
կին , որով Հայերն կրտախպէր Յունա-  
կան արարողութիւններն , ծեսերն եւ  
մանաւանդ Քաղկէդոնի ժողովն ընդու-  
նիլ , Դունոյ մէջ գուժարուած ժողովն  
տուած պատասխանը մէջ բերել : Ե-  
կեղեցական պատմութիւնը կ'աւել թէ